Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
ապրիլի 29-ի N 698-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության համայնքների, բացառությամբ Արարատի մարզի Տափերական, Նոր Կյանք, Փոքր Վեդի և Լուսառատ համայնքների, կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առանձնահատկությունները:

2. Կադաստրային քարտեզներում անշարժ գույքի միավորների հետ կապված սխալները՝ իրենց իրավական հետևանքներով, այն սխալներն են, որոնց ուղղման արդյունքում՝

1) չեն փոփոխվում անշարժ գույքի (հողամասի) միավորների նկատմամբ իրավունքների սուբյեկտները, անշարժ գույքի (հողամասի) միավորների որակական ու քանակական բնութագրերը.

2) փոփոխվում են անշարժ գույքի միավորների նկատմամբ իրավունքների սուբյեկտները և (կամ) անշարժ գույքի միավորների որակական և (կամ) քանակական բնութագրերը:

3. Կադաստրային քարտեզներում անշարժ գույքի միավորի գծային չափերի կամ մակերեսների սխալի ուղղումները կատարվում են սեփականատիրոջ կամ իրավատիրոջ դիմումի, հողամասի սահմանները ճշտելու մասին համայնքի ղեկավարի գրության և վերջինիս կողմից հաստատված անշարժ գույքի (հողամասի) միավորների չափագրման փաստաթղթերի կամ իրադրության հատակագծի հիման վրա՝ ուղղվող անշարժ գույքի և ուղղման արդյունքում փոփոխվող սահմանակից հողամասերի բոլոր սեփականատերերի և դրանց նկատմամբ այլ իրավունքներ ունեցող անձանց համաձայնությամբ: Ընդ որում, ուղղման ներկայացված անշարժ

գույքի միավորի սահմանի ուղղումներն իրականացվում են առանց սահմանակից հողամասերի գրանցման տվյալների փոփոխության:

4. Եթե կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալները գտնվում են N 3 հավելվածով սահմանված թույլատրելի շեղումների սահմաններում, ապա այդ դեպքում ուղղումներ չեն կատարվում:

5. Կադաստրային քարտեզներում հողամասերի սեփականության սուբյեկտի սխալների ուղղումները կատարվում են գրանցված կամ կադաստրային գործում առկա և (կամ) հողամասի նկատմամբ գրանցման կամ հաշվառման համար ներկայացված իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերի տվյալներին համապատասխան: Ընդ որում, քաղաքացու կամ իրավաբանական անձի անվամբ հաշվառված հողամասը, եթե դրա նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր, համարվում են անհատույց փոխանցված համայնքին: Համայնքային սեփականության գրանցման համար հիմք է համայնքի ղեկավարի գրությունը՝ տվյալ հողամասը քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով տրամադրված չլինելու մասին:

6. Կադաստրային քարտեզներում գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի ուղղումներն իրականացվում են կադաստրային քարտեզագրման և հողային ֆոնդի սկզբնական ու ընթացիկ հաշվառման նյութերում ամրագրված գյուղատնտեսական հողատեսքերին համապատասխան, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման պահանջներով փոփոխված լինելու դեպքում նաև դրանց համապատասխան:

7. Համայնքներին հողերի փոխանցման ժամանակ առաջացած հողամասերի նպատակային նշանակությունների հետ կապված անճշտությունների դեպքում, եթե նախկինում հողամասերի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ առկա են համապատասխան որոշումներ, ապա ուղղումը կատարվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերա-

տեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 599 որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի քննարկումից հետո ստացված դրական եզրակացության հիման վրա: Ընդ որում, եթե նախկինում հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման վերաբերյալ չկան համապատասխան որոշումներ, ապա հողամասերի նպատակային նշանակությունը փոխվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված համաձայնությունը համարվում է նաև տրված համաձայնություն այն մասին, որ հետագայում իրենց անշարժ գույքի (հողամասի) միավորների նկատմամբ գործարքներ իրականացնելիս պետք է ներկայացվեն նոր չափագրման փաստաթղթեր կամ իրադրության հատակագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

30.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ